

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Տերտերյան Ա. Ա.

Կայուն զարգացման 2030 օրակարգում ներառված նպատակները Հայաստանում և աշխարհում թիրախավորում են այն մարտահրավերները, որոնք ծառայել են մարդկության առաջ: Այդ նպատակներն առնչություն ունեն կյանքի բոլոր բնագավառների հետ այնպես, ինչպես Ադետների ռիսկերի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագրի նպատակները: Կայուն զարգացման նպատակների շրջանակում ընտրված ցուցանիշների գերակշիռ մասն արտացոլում է նաև դիմակայուն երկրներ ձևավորող Սենդայի գործողությունների ծրագրի նպատակները:

Հոդվածում կայուն զարգացման նպատակների ցուցանիշները դիտարկվում են ադետների ռիսկերի կառավարման տեսանկյունից: Ցուցանիշների կոռելացիոն և ռեգրեսիոն փոխկապակցվածության հետազոտման միջոցով հիմնավորվում է կայուն զարգացման նպատակների իրագործման անմիջական ազդեցությունն ադետների ռիսկերի նվազեցման գործընթացի վրա և հակառակը:

Բանալի բառեր. կայուն զարգացում, ադետների ռիսկերի կառավարում, նպատակ, դիմակայունություն:

Նախաբան: Ամբողջ աշխարհում տարեցտարի ավելանում են մարդկությանը սպառնացող բազմաբնույթ վտանգները, որոնք իրենց հերթին առաջացնում են տարբեր մասշտաբների արտակարգ իրավիճակներ, ադետներ: Լայնամասշտաբ ադետներից հետո, որպես կանոն, նկատվում է բնակչության աճի անկում, աղքատության մակարդակի բարձրացում, ներդրումների բացակայություն, պետության հեղինակազրկում և այլ բացասական հետևանքներ:

Աղետների ռիսկի կառավարումը (ԱՌԿ)՝ որպես պետության սոցիալ-տնտեսական զարգացման բաղկացուցիչ մաս, առանցքային դերակատարություն ունի երկրի կայուն զարգացման համատեքստում [2]: Այս փաստն ամրագրվել և ճանաչվել է ԱՌՆ և կայուն զարգացման վերաբերյալ մի շարք գլոբալ, միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ «ՅուՆեսկոյի ռազմավարությունը և գործողությունների պլանն ավելի անվտանգ աշխարհի համար» (1994թ.)՝ որպես աղետների ռիսկերի նվազեցման առաջին խոշոր միջազգային փաստաթղթում, որը ճանաչեց կայուն զարգացման և աղետների ռիսկերի կառավարման միջև կապը: Այդ ժամանակից ի վեր այս սերտ փոխհարաբերությունը շարունակաբար ամրապնդվում է հիմնական գլոբալ համաձայնագրերի շրջանակներում՝ սկսած MDGs (Millennium Development Goals) [3] մինչև ՅուՆեսկոյի իրականացման ծրագիր [4] (ՅուՆեսկոյ, 2002 թ. Սեպտեմբեր), «Հիոգոյի գործողությունների ծրագիր» (2005-2015) և «Մեր ուզած ապագան» (“The future we want Rio+20 [5]” Ռիո, 2012 թ. հունիս), Մեդայի գործողությունների ծրագիր Sendai Framework for DRR [6] (Sendai, Mach 2016) և 2030 օրակարգը կայուն զարգացման համար (Նյու Յորք, 2015 թ. սեպտեմբեր) [7]:

Այս ոլորտում կատարված հետազոտությունները և աղետների զարգացման միտումները փաստում են, որ աղքատությունը, աղետները, զարգացման հեռանկարները սերտորեն փոխկապակցված են: IRDR (Integrated Research on Disaster Risk) հետազոտական ծրագիրը, որը հովանավորվում է Գիտության միջազգային խորհրդի (ICSU), Միջազգային սոցիալական գիտությունների խորհրդի (ISSC) և ՄԱԿ-ի Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության (UNISDR) քարտուղարության կողմից, նշում է. «Կայուն զարգացման նպատակները (ԿՁՆ) գործողության համընդհանուր կոչ են աղքատությունը վերացնելու, մոլորակը պաշտպանելու և բոլորի կյանքն ու հեռանկարները բարելավելու համար: 17 նպատակներն ընդունվել են ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների կողմից 2015թ.՝ որպես Կայուն զարգացման 2030 օրակարգի բաղադրիչ, որը սահմանում է նպատակներին հասնելու 15-ամյա ծրագիր» [8]: Աղետների մասշտաբները, հաճախականությունը, դրսևորման ուժգնությունն էականորեն ազդում են երկրների կայուն զարգացման վրա: Զարգացման գործընթացները բազմաբնույթ, ուղղակի և անուղղակի կապերով կապված են աղետների ռիսկերի նվազեցման հետ: ԱՌԿ գործընթացները բխում են կայուն զարգացման նպատակներից:

Հայաստանը՝ որպես ՄԱԿ-ին անդամակցող երկիր, իրականացնում է ինչպես Կայուն զարգացման, այնպես էլ Սենդայի գործողություններով սահմանված նպատակները: Սույն հետազոտության նպատակն է որոշ ցուցանիշների վերլուծությամբ պարզել, թե որքանով են ԿԶՆ ցուցանիշները և ԱՌՆ գործընթացները ազդում մեկը մյուսի վրա և նպաստում երկրի դիմակայունության բարձրացմանը:

Սույն հետազոտության օբյեկտը Կայուն զարգացման նպատակներն են, իսկ առարկան՝ աղետների ռիսկերի կառավարման և ԿԶՆ որոշ նպատակների միջև առկա կապերի ուսումնասիրությունը: ԿԶՆ յուրաքանչյուր նպատակ սահմանում է հստակ թիրախներ, որոնք պետք է իրագործվեն պետությունների կողմից առավելագույնը մինչև 2030 թվականը: Այդ թիրախներից գրեթե բոլորն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապ ունեն աղետներից պետության դիմակայունության աստիճանի բարձրացման, ռիսկերի կառավարման հետ: Կայուն զարգացման նպատակների յուրաքանչյուր թիրախի համար առանձնացվում են հատուկ ցուցանիշներ, որոնք իրենց հերթին միջազգային և ազգային են: Դիտարկելով ՀՀ Վիճակագրական կոմիտեի կայքում առանձնացված ցուցանիշները [8]՝ նկատում ենք, որ գրեթե յուրաքանչյուր նպատակի համատեքստում ներառված ցուցանիշներից մի քանիսն ուղղակիորեն հղում են Աղետների ռիսկերի կառավարման գործընթացներին: Ստորև մեր կողմից առանձնացված են հիմնական այն թիրախները և համապատասխան ցուցանիշները, որոնք առավել անմիջականորեն են փոխկապակցված աղետների ռիսկերի կառավարման գործընթացների հետ և դիտարկված են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կայուն զարգացման գործընթացների համեմատական վերլուծությունը աղետների ռիսկերի կառավարման տեսանկյունից:

Ստորև մեր կողմից առանձնացված են ԿԶՆ այն թիրախները և ցուցանիշները, որոնք առավել անմիջականորեն են արտացոլում ԱՌԿ և Կայուն զարգացման կապերը: Այն դեպքերում, երբ առկա ցուցանիշները չեն արտացոլում աղետների դիմակայունության աստիճանը, ապա այդ դեպքում մեր կողմից առաջարկվում է ներմուծել (կիսառել) նոր ցուցանիշներ, որոնց միջոցով հնարավոր է դառնում հաշվարկել աղետների ռիսկերի նվազեցման և կայուն զարգացման նպատակների իրագործման կապերը:

Աղյուսակ 1:

Կայուն զարգացման նպատակների ԱՌԿ ցուցանիշների համադրում

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ	ԱՌԿԱ ԿԱՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ
<p>Նպատակ 3. Ամուր առողջություն և բարեկեցություն Մինչև 2030թ. վերջ դնել ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և անտեսված արևադարձային հիվանդությունների համաճարակներին և պայքարել հեպատիտի, ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների և այլ վարակիչ հիվանդությունների դեմ</p>	<p>Առկա Ցուցանիշը 3.3.2. Տուբերկուլյոզով հիվանդացության մակարդակը, 100 000 բնակչի հաշվով: 3.3.3. Մալարիայի 1000 մարդու հաշվով նոր դեպքերի թիվը մեկ տարվա ընթացքում: 3.3.4. Հեպատիտ Բ-ով վարակման դեպքերի թիվը 100 հազար բնակչի հաշվով: ԱՌՆ հիմնավորումը Սուր վարակիչ հիվանդություններն էական ազդեցություն ունեն կենսաբանական, առողջապահական աղետների ռիսկերի վրա և կարող են առաջ բերել համատարած համաճարակներ:</p>
<p>Նպատակ 6. Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ Թիրախ 6.1 Մինչև 2030թ. ձեռք բերել անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր և հավասար հասանելիություն բոլորի համար</p>	<p>Ցուցանիշները 6.1.1. Ջրով չապահովված բնակչության շրջանում ռիսկով կշռված տարածվածությունը (%) 6.2.1.բ Ձեռքերը լվանալու միջոցների անհասանելիության ռիսկով կշռված տարածվածությունը բնակչության շրջանում (%) Դիտարկում <i>Առաջարկում ենք համալրել հետևյալ ցուցանիշները՝</i> • Ջրի կորուստներ մլն. խ/մ • Կենտրոնացված ջրամատակարարմամբ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը % ԱՌՆ հիմնավորումը Ջրային ռեսուրսների կորուստները, ջրամատակարարման հնարավորությունները բնութագրում են ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալ-կենսաբանական աղետների ռիսկերը:</p>
<p>Թիրախ 6.2. Մինչև 2030թ. ձեռք բերել համարժեք և հավասար սանիտարահիգիենիկ պայմաններ բոլորի համար և վերջ դնել բնական կարիքները դրսում հոգալուն հատուկ ուշադրություն դարձնելով կանանց, աղջիկների և խոցելի իրավիճակներում գտնվողների կարիքներին</p>	<p>6.2.1.ա Սանիտարական պայմաններով անապահով բնակչության ռիսկով կշռված տարածվածությունը (%) Դիտարկում <i>Առաջարկում ենք համալրել հետևյալ ցուցանիշը՝</i> Կենցաղային ջրօգտագործումը մեկ շնչի հաշվով, խոր. մ/տարի ԱՌՆ հիմնավորումը Կենցաղային ջրի հասանելիությունն ու որակն անմիջական կապ ունեն առողջապահական ռիսկերի հետ, մասնավորապես սուր վարակիչ, համաճարակային հիվանդությունների առաջացման տեսանկյունից:</p>

Աղյուսակում մեր կողմից առանձնացվել են Կայուն զարգացման 3-րդ՝ Ամուր առողջություն և բարեկեցություն, և 6-րդ՝ Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ նպատակները, և կատարվել է համապատասխան ցուցանիշների վերլուծություն: Ընտրանքը պայմանավորված է այն հանգամանքով, որ ջրի անվտանգությունն ու առողջապահական համակարգը խիստ փողկապակցված են, և այդ ոլորտում առկա խնդիրները կարող են հանգեցնել կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակների, աղետների՝ մասնավորապես դառնալով սուր վարակիչ հիվանդությունների և համաճարակների պատճառ:

Ընտրվել են հետևյալ ցուցանիշները.

6.1.1. Ջրով չապահովված բնակչության շրջանում ռիսկով կշռված տարածվածությունը:

6.2.1.ա Սանիտարական պայմաններով անապահով բնակչության ռիսկով կշռված տարածվածությունը:

6.2.1.բ Ձեռքերը լվանալու միջոցների անհասանելիության ռիսկով կշռված տարածվածությունը բնակչության շրջանում:

- Կենցաղային ջրօգտագործումը մեկ շնչի հաշվով

3.3.2. Տուբերկուլյոզով հիվանդացության մակարդակը 100 000 բնակչի հաշվով:

Սուր վարակիչ տուբերկուլյոզ հիվանդության կանխագելման կարևոր 3 նախապայմաններից մեկը սանիտարահիգիենիկ պայմանների առկայությունն է, հետևաբար խմելու և կենցաղային ջրի որակական հատկանիշները առանձնացվել են որպես բնութագրող ցուցանիշներ: Հաշվարկվել են տվյալ ցուցանիշների փոխադարձ կապվածությունները և փոխազդեցությունները 15 տարվա տվյալների վերլուծության՝ կոռելյացիոն և ռեգրեսիոն կապերի բացահայտման միջոցով:

Հաշվարկվել են հետևյալ կապերը.

Աղյուսակ 2:

Դիտարկված ցուցանիշների կոռելյացիոն կապերը

Կենցաղային ջրօգտագործում և տուբերկուլյոզով հիվանդաց. կոռելյացիոն կապը 2009-2019թթ.	- 0.850477537
Ձեռքերը լվանալու միջոցների անհասանելիության և տուբերկուլյոզով հիվանդաց կոռելյացիոն կապը 2009-2019թթ.	0.982898743
Սանիտարական պայմաններով անապահով բնակչության և տուբերկուլյոզով հիվանդաց. կոռելյացիոն կապը 2009-2019թթ.	- 0.919165637
Ջրով չապահովված բնակչության շրջանում և տուբերկուլյոզով հիվանդաց. կոռելյացիոն կապը 2009-2019թթ.	0.984104732

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ընտրված բոլոր ԱՌԿ ցուցանիշերի միջև գործում է ուղիղ և հակադարձ ամուր կոռելյացիոն կապ, հետևաբար ընտրված ԱՌԿ ցուցանիշներն ունեն ամուր և կայուն ազդեցություն ԿԶՆ իրագործման վրա: Դիտարկվող բոլոր դեպքերում կոռելյացիայի գործակիցը գեազանցում է 0.8 ցուցանիշը և վկայում ցուցանիշերի ամուր փոխկապակցվածության մասին:

Ցուցանիշների ռեգրեսիոն կապը ևս բավականին բարձր է:

Աղյուսակ 3:

Ցուցանիշների ռեգրեսիոն կապերը

6.2.1.ա և 3.3.2 ցուցանիշներ	Intercept	31.97307849	RSquare 0.844865468
	X Variable 1	-0.262911976	
Կենցաղային ջրօգտագործումը և 3.3.2 ցուցանիշներ	Intercept	55.20942672	R Square 0.723312042
	X Variable 1	-0.50088921	
6.1.1. և 3.3.2. ցուցանիշներ	Intercept	-1.830686695	R Square 0.968462123
	X Variable 1	11.51287554	
6.2.1.բ և 3.3.2. ցուցանիշներ	Intercept	-50.82808989	R Square 0.966089939
	X Variable 1	7.032102729	

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները փաստում են, որ նշված փոփոխականների ազդեցությունը հիմնական փոփոխականի վրա էական են, և դրանց շարժընթացը գնահատելով՝ հնարավոր է դառնում ճշգրիտ կանխատեսել և նվազեցնել կենսաբանական բնույթի վտանգները և աղետները:

Եզրահանգում: Կատարված վերլուծության արդյունքները վկայում են, որ Կայուն զարգացման նպատակները և աղետների ռիսկերի կառավարման գործընթացները փոխկապակցված են: Աղետներից խոցելիության նվազեցումն անմիջականորեն ազդում է կայուն զարգացման նպատակների իրագործման վրա: Զուգահեռաբար կարող ենք պնդել, որ Կայուն զարգացման նպատակների ցանկացած թիրախի իրականացումը նպաստում է աղետների ռիսկերի նվազեցմանը: Աղետների ռիսկերի կառավարման պետական մակարդակով նոր ռազմավորություն մշակելիս պետք է հիմնվել առկա կապերի խորքային ուսումնասիրության վրա և ապահովել, որ աղետների ռիսկերի նվազեցման մեխանիզմներն ամուր և անմիջականորեն փոխկապակցվեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հետ և արտացոլեն ԿԶՆ 17 նպատակների իրագործման ճանապարհները: Առկա

խոչընդոտներից թերևս պետք է առանձնացնել աղետների, արտակարգ իրավիճակների մասով առկա թերի վիճակագրությունը, ինչն էականորեն դժվարացնում է վերլուծական աշխատանքները, իրավիճակների սցենարային մոդելավորումը, կանխատեսման հնարավորությունները, ինչպես նաև խախտում է տեղեկատվության տրամադրման ազգային և միջազգային համաձայնագրերի կատարման գործընթացները:

ПРИОРИТЕТ УПРАВЛЕНИЯ РИСКАМИ СТИХИЙНЫХ БЕДСТВИЙ КАК ГАРАНТИЯ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ СТРАНЫ

Тертерян А. А.

Цели, включенные в повестку дня 2030 в области устойчивого развития в Армении и во всем мире, ориентируются на проблемы, с которыми сталкиваются люди. Эти цели связаны со всеми сферами жизни так же, как и Сендайский план действий по снижению рисков бедствий на 2015-2030 годы. Большинство показателей, выбранных в рамках целей устойчивого развития, отражают так же цели Сендайского плана действий, что способствует укреплению устойчивости стран.

В статье показатели целей стабильного развития рассматриваются с точки зрения управления рисками стихийных бедствий. С помощью исследования взаимосвязи корреляционных и регрессионных показателей обосновывается прямое влияние реализаций целей стабильного развития на процесс снижения риска бедствий и наоборот.

Ключевые слова: устойчивое развитие, управление рисками стихийных бедствий, цель, устойчивость.

THE PRIORITY OF DISASTER RISK MANAGEMENT AS A GUARANTEE OF SUSTAINABLE DEVELOPMENT OF THE COUNTRY

Terteryan A. A.

The goals included in the “2030 Agenda for Sustainable Development” are aimed at solving the problems facing humanity in Armenia and around the world. These goals relate to all areas of life, as the goals that are included in the “Sendai Framework for Disaster Risk Reduction 2015–2030”. Most of the indicators selected under the Sustainable Development Goals reflect the goals of the Sendai Action Plan, which aimed at building resilient countries.

The paper examines the Sustainable Development Goals from a disaster risk management perspective. The study of the correlation and regression relationship of indicators substantiates the direct impact of the implementation

of sustainable development goals on the process of disaster risk reduction, and vice versa.

Keywords: sustainable development, disaster risk management, goal, sustainability.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Վիճակագրական կոմիտե ԿԶՆ <http://sdg.armstat.am/am/> (22.10.2021)
2. ՄԱԿ, Կայուն զարգացման նպատակները <https://sustainabledevelopment.un.org/topics/disasterriskreduction> (22.10.2021)
3. Millennium Development Goals <https://www5.worldbank.org/mdgs/> (22.10.2021)
4. Report of the World Summit on Sustainable Development, Johannesburg, South Africa, 26 August-4 September 2002, <https://digitallibrary.un.org/record/478154> (22.10.2021)
5. The future we want Rio+20, <https://sustainabledevelopment.un.org/content/documents/733FutureWeWant.pdf> (22.10.2021)
6. Sendai Framework for DRR, <https://www.undrr.org/publication/sendai-framework-disaster-risk-reduction-2015-2030> (22.10.2021)
7. The Sustainable Development Goals, <https://unfoundation.org/what-we-do/issues/sustainable-development-goals/> (22.10.2021)
8. IRDR, ICSU, Issue Brief: Disaster Risk Reduction and Sustainable Development <https://www.preventionweb.net/publication/issue-brief-disaster-risk-reduction-and-sustainable-development> (22.10.2021)

Տեղեկություններ հեղինակի մասին

Տերտերյան Ա. Ա. – հայցորդ, ասիստենտ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

Դասախոս, ՀՀ ԱԲՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա

Էլ. փոստ՝ terteryan.ani@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 21.10.2021

Գրախոսվել է՝ 27.02.2022